տարբերություն է ստորին մասից։ Ընդհանրապէս կլիման խոնաւ է, անձրեւառատ, լեռները ջրարձակ, աղբիւրներն ու առուները անհամար, լճակները դալարագեղ մարգերով բոլորուած, չունի Արարատեան եւ Վասպուրական աշխարհների չոր եւ խիստ կլիման։ Երկրի դիրքի համաձայն տեղ-տեղ մշտադալար եւ ծաղկուն է. տեղ-տեղ ձմեռը ծառերը տերեւաթափ են լինում, սարերի լանջերը ձիւնով ծածկուում։ Մի կողմը ցանում են ցորեն-գարի, միեւնոյն օրը մի ուրիշ տեղ կալն են ծեծում։ Ո՛չ միայն մշտադալար ձիթենին, դափնին, կիտրոնին, նարնջին, թէյը աճում են եւ առատ բերք են տալիս, այլ նոյն իսկ 1000′—2000′ բարձրութեան վերայ, երկնամերձ լեռներն այնպէս են պատսպարած խորխոր ձորերն ու տափարակները, որ Խեմորի, Խոդի, Ծրիայի, Որջոդի, Մելոյի եւ Խադիլայի ձորերում երբեք չեն մրսում ձիթենիները։ Եթէ տարին նոյն իսկ խիստ ցրտալի է, ձմեռն ընդհանրապէս այնքան կարճատեւ է եւ ծովային տաք հողմն այնքան առատ, որ բերքը անվնաս ժամանակին հասնում է եւ ա՛յնքան առատութեամբ որ բնակչութեան կարիքը բաւարարում է, սովի չի մատնում։

Երկրի միջին-կենդրոն մասում, որտեղից բղխում են Զրմեռ եւ Թորդում վտակները, ունին 9·000′—12·000′ բարձրութեամբ լեռներ, որոնք մինչեւ այսօր ան-